ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2018 թվականի N 30-Ա

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ և ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՂԵԳՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 և 1.17 կետերով, հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի փետրվարի 21-ի N457-Ա հրամանով հաստատված մեթոդական ուղեցույցի 10-րդ կետը.

ո ր ո շ ու մ եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովների գործունեության աշխատակարգը՝ համաձայն N1 հավելվածի, ինչպես նաև տարածաշրջանային ուղեգրող հանձնաժողովների կազմերը՝ համաձայն N2, N3, N4, N5, N6 հավելվածների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2018թ. մարտի 15
ք. Կապան

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018 թվականի մարտի 15-ի
N 30-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՂԵԳՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կարգավորվում են բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց (այսուհետ՝ շահառու) պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորման և գործունեության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:
2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ, սույն հրամանով և այլ իրավական ակտերով:
3. Բժշկական ցուցումների առկայության դեպքում, համապատասխան բժիշկ-մասնագետների կողմից տրված եզրակացության հիման վրա Հանձնաժողովը իրականացնում է շահառուի ուղեգրում բժշկական կազմակերպություններ՝ պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում (այսուհետ՝ բուժօգնություն) ստանալու նպատակով:
4. Հանձնաժողովի կողմից տրված ուղեգրով բժշկական օգնություն և սպասարկում կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և բուժօգնություն իրականացնող բոլոր բժշկական կազմակերպություններում:
5. Հանձնաժողովի կողմից տրված ուղեգրի գործողության ժամկետը մեկ ամիս է՝ տրման օրվանից:

II. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՔՆՆԱՐԿՄԱՆ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

6.Շահառուն բուժօգնություն ստանալու նպատակով դիմում է ներկայացնում հանձնաժողով ձևավորող բժշկական կազմակերպություն, որին շահառուն կցագրված է, ըստ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված ցանկի՝ համաձայն Ձև 1-ի:

7.Շահառուի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով Հանձնաժողովին կարող են դիմել նաև պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունները, բժշկական կազմակերպությունները՝ գրավոր միջնորդությամբ:

8.Դիմումին կամ գրավոր միջնորդությանը կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
2) ուղեգիր կամ տեղեկանք, կամ քաղված՝ ամբուլատոր բժշկական քարտից, կամ բժշկական եզրակացություն՝ տրված հիվանդին բուժող բժշկի կողմից, այդ թվում՝ անհետաձգելի ցուցումներով հիվանդանոց ընդունված դեպքերում, կամ եզրակացություն՝ տրված համապատասխան նեղ մասնագետի կողմից կամ դրանց պատճենները,
3) սույն ենթակետում նշված խմբերից որևէ մեկին պատկանելությունը հավաստող, իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթի պատճեն՝ առկայության դեպքում՝
   ա. ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0.01 միավորից մինչև 30.00 միավորը ներառյալ անապահովության միավոր ունեցող ընտանիքների անդամներ,
   բ. 65 և բարձր տարիքի միայնակ կենսաթոշակառուներ,
   գ. փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքների անդամներ,
   դ. ՀՀ-ում մշտական բնակություն ունեցող ՀՀ քաղաքացիություն չունեցող հղի կանայք՝ միայն ծննդալուծումը,
   ե. կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ,
   զ. ժամանակավոր խնամքի հաստատություններում խնամվող երեխաներ,
   է. բազմազավակ (4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքի անդամներ,
   ը. երեխա խնամող միայնակ անձ,
   թ. Հայրենական մեծ պատերազմի և նրանց հավասարեցված անձանց ընտանիքի անդամներ,
   ժ. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 1-րդ հոդվածի 6-րդ մասով բուժաշխատող (ավագ, միջին և կրտսեր) հանդիսացող անձինք, որոնց աշխատավարձը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի 150-ապատիկը (150 հազար ՀՀ դրամը):

9. Շահառուի կողմից դիմումին կից ներկայացվող փաստաթղթերով հիմնավորող

Հանձնաժողովը կարող է անձամբ դիմել համապատասխան իրավասու մարմնին՝ Շահառուի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար:
10.Դիմումները և գրավոր միջնորդությունները ընդունվում են ինչպես թղթային, այնպես էլ՝ էլեկտրոնային եղանակով, Հանձնաժողովի քարտուղարի կողմից ներկայացվում Հանձնաժողովի նախագահին և անդամներին:

11.Հանձնաժողովի կողմից բուժօգնության համար տրված ուղեգիրը կնքվում է համապատասխան հանձնաժողով ձևավորող բժշկական կազմակերպության կնիքով:

III. ՈՒՂԵԳՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

12.Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

13.Հանձնաժողովի հերթական նիստերը հրավիրվում են շաբաթական մեկ անգամ՝ դիմումների կամ գրավոր միջնորդությունների առկայության դեպքում:

14.Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ կարող է հրավիրվել արտահերթ նիստ:

15.Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

16.Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են և նիստերի արդյունքում կազմված արձանագրություններն ստորագրվում են Հանձնաժողովի նախագահի, անդամների և քարտուղարի կողմից:

17.Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը,
2) ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը,
3) մասնակցում է որոշումների կայացման գործընթացին,
4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը,
5) Հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ սահմանված կարգով ներկայացնում է հաշվետվություն ՀՀ առողջապահության նախարարություն և ՀՀ Սյունիքի մարզպետարան:

18.Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է Հանձնաժողովի անդամներից որևէ մեկը Հանձնաժողովը ձևավորող մարմնի որոշմամբ:

19.Հանձնաժողովի անդամները՝

1) մասնակցում են Հանձնաժողովի նիստերին,
2) մասնակցում են որոշումների կայացման գործընթացին,
3) ծանոթանում են և ստորագրում Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները:

20.Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է Հանձնաժողովի նիստերի կազմակերպումը,

2) ապահովում է Հանձնաժողովի նիստերի արձանագրությունների կազմումը, սույն աշխատակարգի 11-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնում է ստորագրման Հանձնաժողովի նախագահին:

3) սույն աշխատակարգով սահմանված կարգով նախատեսվում է

ա) Շահառուի բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպելու ուղեգիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման 7-րդ հավելվածով հաստատված Ձև 1-ին համապատասխան,

բ) բուժօգնության ուղեգիրը տրամադրելը մերժելու մասին պատասխան՝ սույն կարգով հաստատված Ձև 3-ին համապատասխան,

4) ապահովում է բուժօգնությունը կազմակերպելու ուղեգիր կամ ուղեգիրը տրամադրելը մերժելու մասին պատասխանի տրամադրումը դիմումատուներին սույն աշխատակարգով հաստատված Ձև 3-ին համապատասխան՝ առձեռն կամ էլեկտրոնային տարբերակով,

5) կատարում է համապատասխան նշում սույն աշխատակարգի Ձև 2-ով հաստատված գրանցամատյանում,

21. Հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է Հանձնաժողովի անդամներից որև մեկը՝ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

22.Դիմումները և գրավոր միջնորդությունները քննարկվում են առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ անհետաձգելի հիվանդանոցային բուժում պահանջող դեպքերը քննարկվում են երկու աշխատանքային օրվա ընթացքում կամ արտահերթ:

23. Դիմումները կամ գրավոր միջնորդությունները քննարկվում են, և ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա Հանձնաժողովն ընդունում է համապատասխան որոշում:

24. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստի մասնակիցների կեսից ավելի կողմ ձայներով:

25. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկության ժամանակ ունի մեկ ձայնի իրավունք:

26. Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

27.Հանձնաժողովի կողմից կայացվում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) բավարարել շահառուի դիմումը և տրամադրել ուղեգիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման 7-րդ հավելվածով հաստատված Ձև 1-ին համապատասխան,

2) մերժել շահառուի դիմումը և տրամադրել պատասխան՝ սույն աշխատակարգով հաստատված Ձև 3-ին համապատասխան:

28. Հանձնաժողովի կողմից բուժօգնության համար տրված ուղեգիրը կնքվում է համապատասխան բժշկական կազմակերպության կնիքով:

29.Շահառուի բուժօգնությունը կազմակերպելու նպատակով բժշկական

ա. ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն աշխատակարգի 11-րդ կետով սահմանված անհրաժեշտ պայմաններին և պահանջներին,
բ. պացիենտն արդեն իսկ ընդունվել է բժշկական կազմակերպություն, գտնվում է բուժման մեջ կամ դուրս է գրվել, բացառությամբ անհետաձգելի հիվանդանոցային բուժում պահանջող դեպքերի,
գ. բուժման վճարովի եղանակը ընտրելուց և վճարովի ծառայությունների պայմանագիրը կնքելուց կամ համապատասխան վճարումները կատարելուց հետո,
դ. բացակայում են կամ պատշաճ ներկայացված չեն բժշկական ցուցումները,
դ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման N 2 հավելվածի 9.3-րդ կետով սահմանված կարգով հաստատված չափաքանակների սպառման դեպքում,
ե. տվյալ տարվա ընթացքում շահառուն արդեն մեկ անգամ Հանձնաժողովի կողմից ուղեգրվել է հիվանդանոցային բուժօգնության:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյան

Ձև 1

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՂԵԳՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

----------ԻՆ

----------ԻՑ

ՀԱՍՑԵ----------

ՀԵՌԱԽՈՍ----------

ԴԻՄՈՒՄ

□ Հայտնում եմ, որ ես (պացիենտը) չեմ (չի) գտնվում բուժման մեջ բժշկական կազմակերպությունում կամ դուրս չեմ (չի) գրվել

□ Հայտնում եմ, որ կապված անհետաձգելի հիվանդանոցային բուժման հետ՝ ես (պացիենտը) գտնվում եմ (է) բուժման մեջ բժշկական կազմակերպությունում կամ դուրս եմ (է) գրվել

Կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

□ պացիենտի անձը հաստատող փաստաթուղթ

□ բժշկական փաստաթուղթ, անհետաձգելի դեպքերում՝ տեղեկանք տրված տվյալ բժշկական կազմակերպության կողմից

□ անապահովության գնահատման համակարգում ընդգրկված մինչև 30.00 անապահովության միավոր ունեցող ընտանիքների անդամ

□ 65 և բարձր տարիքի միայնակ կենսաթոշակառու

□ փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքի անդամներ

□ բազմազավակ (4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքի անդամներ

□ երեխա խնամող միայնակ անձ

□ Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների ընտանիքների անդամ
□ բուժաշխատող
□ այլ փաստաթղթեր՝ ըստ շահառուի հայեցողության

_____

ԴԻՄՈՂ՝ _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

_____
(օր, ամիս, տարեթիվ)

Ձև 2

ԱՆՑԱՄԱՏՅԱՆ
ԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ
ԱՏԱԿՈՎ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԳՐԱՎՈՐ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԵԳՐԵՐԻ ԵՎ
ՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

	Պացիենտի անուն, ազգանուն	Միջնորդություն	Հասցե	Ախտորոշում	Հանձնաժողովի որոշում	Ստացող (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, ստորագրություն)

Հանձնաժողովի նախագահ _____
(անուն, ազգանուն, ստորագրություն կնիք (առկայության դեպքում))

Ձև 3

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՂԵԳՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

պարոն (տիկին) _____

_____

Պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունը և սպասարկումը ստանալու Ձեր դիմումը (.....գրավոր միջնորդությունը) (ընդգծել) մերժվել է բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի որոշմամբ՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի _____ -ի N _____ հրամանով հաստատված հավելվածի 35-րդ կետի _____ ենթակետը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **անուն, ազգանուն, ստորագրություն**

Կ.Տ.

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018 թվականի մարտի 15-ի
N 30-Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ուղեգրող հանձնաժողովի

1. Ն.Գևորգյան- ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ (նախագահ)

2. Ա.Առաքելյան- «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժքույր (քարտուղար)

3. Վ.Մանասյան- «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժական գծով փոխտնօրեն

4. Ն.Հարությունյան- «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական գծով փոխտնօրեն

5. Ն.Թադևոսյան- «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի արտահիվանդանոցային ծառայության առողջության առաջնային պահպանման բաժանմունքի վարիչ

6. Ա.Ասատրյան- «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վնասվածքաբան

7. Ա.Հովհաննիսյան- Կապանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ:

8. Ա.Սաֆարյան- ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի առաջատար մասնագետ

9. Գ.Գրիգորյան – Կապանի համայնքապետարանի քարտուղարության բաժնի առաջատար մասնագետ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյան

Հավելված N 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018 թվականի մարտի 15-ի
N 30-Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ուղեգրող հանձնաժողովի

1. Զ.Այվազյան- «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական գծով փոխտնօրեն (նախագահ)

2. Ս.Մինասյան- «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր բուժքույր (քարտուղար)

3. Ա.Թադևոսյան- ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ

4. Լ.Հարությունյան- «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժական գծով փոխտնօրեն

5. Ա.Բաղդասարյան- «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ընտանեկան բժիշկ

6. Ա.Միքայելյան- Գորիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ

7. Ա.Սաֆարյան- ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի առաջատար մասնագետ:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյան

Հավելված N 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018 թվականի մարտի 15-ի
N 30-Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ուղեգրող հանձնաժողովի

1. Ա.Ներսիսյան- «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն (նախագահ)
2. Վ.Թևանյան- «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժական գծով փոխտնօրեն (քարտուղար)
3. Ա.Թադևոսյան- ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
4. Ի.Զիլֆուղարյան- «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական գծով փոխտնօրեն
5. Ա.Գրիգորյան- «Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ի տնօրեն
6. Կ.Իվանյան- Սիսիանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ
7. Վ.Իվանյան- Սիսիանի համայնքապետարանի համայնքի ղեկավարի տեղակալ:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյան

Հավելված N 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018 թվականի մարտի 15-ի
N 30-Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանի բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ուղեգրող հանձնաժողովի

1. Լ.Վարդանյան- «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն (նախագահ)

2. Ջ.Ստեփանյան- «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահի տեղակալ (քարտուղար)

3. Ն.Գևորգյան- ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

4. Ա.Օհանջանյան- «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժական գծով փոխտնօրեն

5. Մ.Աբրահամյան- «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վիրաբույժ

6. Հ.Հովհաննիսյան – «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի անեսթեզիոլոգ-ռեանիմոտոլոգ

7. Պ.Կարապետյան- Մեղրիի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյան

Հավելված N 6
ՀՀ Սյունիքի մարզպետի
2018 թվականի մարտի 15-ի
N 30-Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի տարածաշրջանի բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի ուղեգրող հանձնաժողովի

1. Ն.Գևորգյան- ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ (նախագահ)

2. Ա.Վանեսյան- «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ավագ բուժքույր (քարտուղար)

3. Հ.Թադևոսյան- «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն

4. Ա.Առաքելյան- «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ընտանեկան բժիշկ

5. Ն.Իսրաելյան- «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ընտանեկան բժիշկ

6. Ա.Ոսկանյան- «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ընտանեկան բժիշկ

7. Ա.Մարտիրոսյան- «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբարձ-գինեկոլոգ:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյան